

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ  
ԵՎ ԱԶԳԵՐԻ ԵՐԶԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ.  
ԹՎԱՅՅԱԼ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

*Վարդան Հայկազյան՝*

*Բանալի բառեր՝ դեստրուկտիվ մեմ, գերշահույթ, երկար փողեր, էկոհամակարգ, ընդհանուր սպառում, էներգախնայողություն, մոլորակի ճակատագիր:*

**1. Ներածություն**

Ֆինանսական հատվածը վերջին 30 տարում դադարեց լինել ռեալ էկոնոմիկայի օգնականը և դարձավ նրա տերը: Առաջացավ համաշխարհային ֆինանսական նոմենկլատուրա՝ մոնոպոլ ֆինանսական օլիգարխիայով և բացարձակապես պարագիտար:

*Ռուսլան Գրինբերգ*

Ինչպես արդեն ոչ ոք չի հարցնում, թե Երրորդ համաշխարհային պատերազմը երբ կարող է սկսվել, քանի որ այն վաղուց արդեն ընթանում է, այնպես էլ հարցադրումներ չեն արվում համաշխարհային ճգնաժամի կայացման վերաբերյալ, քանի որ այն հետզհետե նույնպես պերմանենտ է դառնում: Ինչը չի խանգարում շարունակել անտեսել այն 3 արդեն բացահայտված գործոնները, որոնք մարդկությանը պահում են ճգնաժամային վիճակում.

---

*\*Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի տնօրենի տեղակալ, կ.գ.թ.:*

ա. ռեալ նյութական, արտադրական արժեքների փոխարինումը բազմիցս վերագրավադրած, վիրտուալության աստիճանի հասցրած ակտիվներով և մոնետարիստական աճպարարությունը (դեստրուկտիվ մեմեր),

բ. գործարար մթնոլորտն անարդարությամբ աղավաղող գերշահույթները (դեստրուկտիվ մեմեր),

գ. աշխատանքով ազնվացրած նյութի անփույթ վատնումը, որը հասկապես սննդամթերքին և էներգառեսուրսներին է վերաբերում:

Աշխարհն այս բոլորը պիտի հաղթահարի, իսկ մենք, ի հավելումն, նաև գողությունն ու կաշառակերությունը, որից և պետք կլինի սկսել: Որպեսզի գողոնը լավ պահած բարձր պաշտոնյան այլևս լկտիություն չունենա հարցնելու. իսկ ապացույցներ ունե՞ք, ապացույցներ բերեք: Երկրում քաղաքական կյանքը մինչ այժմ պարալիզված է եղել. այն սնող էներգիան ամբողջապես ծախսվել է ընտրությունների կազմակերպման և նյութական արժեքները *թայֆաների* միջև վերաբաշխելու վրա:

Երկար փողերի մեծ մասը երկրից փախել է և անշարժացել օֆշորներում: Մյուս մասը հեռու է վենչուրային ստեղծագործ կիրառումից: Ընդհակառակը, քանի որ դրանք ձեռք է բերել ոչ թե ինտելեկտը, այլ ճարպկությունը, դրանք կիրառվում են միանգամայն անստեղծագործ սխեմայով՝ թանկ հող ճարել (բոլորին հայտնի, պարզագույն տարբերակ) և վրան ծնվելու պահին մեռած երկնաքեր կառուցել: Այսինքն՝ դրամական միջոցների այս մասն էլ անշարժանում ու դուրս է գալիս շրջանառությունից: Անգամ բանկերում մնում են միայն կարճ փողեր, որոնցով սեփական երջանկությունն ապահովող վաշխառու բանկային համակարգը խեղդում է իրենց ճակատագրական սխալը գործած հաճախորդներին: Մինչդեռ մի շարք կարևոր բնագավառներ ստագնացիա են ապրում. արդյունաբերությունը ոչ բավարար ներդրումների հետևանքով ունի նեղ կառուցվածք, որի պատճառով

այդտեղ դիվերսիֆիկացում դժվար է իրականացնել (Կ.Ադոնց)<sup>1</sup>, և դրա համար ունենք այն, ինչ ունենք, իսկ գյուղատնտեսությունում մեր հաշվարկներով կատարվող ներդրումները մեկ կարգով (10 անգամ) պակաս են նվազագույն անհրաժեշտ ներդրումներից:

Ինչ վերաբերում է բերվող արդարացումներին՝ կիսապատերազմական վիճակ, կիսաշրջափակման և էներգակիրների բացակայություն. առաջին երկուսի համար բազմիցս հիմնավորված պատասխաններ հնչել են: Էներգառեսուրսների վերաբերյալ ուշադրության է արժանի ակադեմիկոս Հրանտ Մարգուլովի կարծիքը, որը ՌԴ «Էներգետիկա և քաղաքացիական հասարակություն» Ռազմավարական հիմնախնդիրների հետազոտման կենտրոնի տնօրենն է և Միջազգային վառելիքաէներգետիկ ասոցիացիայի նախագահը: Ըստ նրա, չնայած էներգառեսուրսներ վաճառողը կլորիկ գումար է դնում գրպանը, շահողը միարժեքորեն հանդիսանում է գնորդը: Եվ բերում է պրոֆ Վ.Խաչատուրովի հաշվարկները. 10 միլիոն տոննա նավթը, որ արժե \$1 մլրդ, այդ նավթը գնած ԱՊՀ երկրներում բերում է ՀՆԱ \$10 մլրդ-ի աճ և ապահովում է տարեկան 2 միլիոն աշխատատեղ: Ճապոնիայի համար այդ թվերն ունեն այսպիսի տեսք՝ \$38,57 մլրդ և 2,83 միլիոն աշխատատեղ, իսկ Չինաստանի համար՝ \$19,24 մլրդ և 17,65 միլիոն: Մեր հայրենակցի ևս մի հետաքրքիր կանխատեսում. որպես ապագայի ամենահզոր էներգառեսուրս այսուհետև ճանաչվելու է էներգախնայողությունը:

Վերը նշված 3 ճակատագրական խոտանումները տեղի են ունեցել բնության նկատմամբ մարդկության քամահրական վերաբերմունքի հետևանքով, որը դրանց դրսևորման համար և՛ հենք, և՛ օրինակ է

---

<sup>1</sup> Հոդվածում, օգտագործված գիտական ամագրերից և համաշխարհային կառույցների հաշվետվություններից բացի, որոնք ներկայացված են *Աղբյուրներ և գրականություն* բաժնում, օգտվել ենք նաև այլ աղբյուրներից՝ [www.slou.ru](http://www.slou.ru), [www.finmarket](http://www.finmarket), [www.faceplanet](http://www.faceplanet), [Population and Environment on-line](http://Population and Environment on-line), [expert.ru](http://expert.ru), [inosmi.ru](http://inosmi.ru), [express.am](http://express.am), [lenta.ru](http://lenta.ru), [kommersant.ru](http://kommersant.ru), [washingtonpost.com](http://washingtonpost.com) և այլն:

ծառայել մի կողմից՝ պետությունների, մյուս կողմից՝ կրոնների (որոնք առաջինների համար ազդեցության գործիք են ծառայում վաղուց ի վեր) հանցավոր թողտվությամբ՝ մասնավորեցված նպատակների գերակայացման պայմաններում: Վերնադսկոն նախազգուշացումն այն մասին, որ մարդու առջև բացվում է հսկայական հնարավորություններով ապագա, միայն թե նա գիտակցի այդ և իր գիտելիքներն ու աշխատանքը չբանեցնի իր իսկ ինքնառչնչացման համար՝ կարծես չլսվեցին: Չկատարվեց մի պարզ կանոն ևս, որ եթե գործարարը ներդրում է կատարում տնտեսության ոչ հումքային հատվածում, արժե, որ նա օգտվի ցածր հարկադրույքներից և վարկային տոկոսներից: Բայց եթե մակարածում ես ազգային հարստությունների և բյուջեի վրա՝ ոչ մի արտոնություն:

Տարիներ անց պարզ կդառնա, որ էլ ավելի բարդացող աշխարհում գերակայող կարող է դառնալ ոչ թե իմաստուն որոշումների որոնումը, այլ շատերի համար գրավիչ հանդիսացող ցինիզմը, որը, մի կողմից, բերեց սպառողականության ֆետիշացման և ուրիշի, այդ թվում՝ բնության հաշվին հարստանալու, մյուս կողմից՝ ՀՆԱ-ով առաջընթաց չափելու *գաղափարախոսությանը*:

## **2. Աճի և զարգացման չափանիշները և բարեկեցությունը**

ՀՆԱ-ն հաշվի է առնում ամեն ինչ, բացի նրանից, ինչը կյանքը դարձնում է ապրելու համար արժանի:

*Ռոբերտ Քենեդի*

1950-ականներից մինչև հիմա մի մարդուն բաժին ընկնող ՀՆԱ մասը (ՀՆԱ/ԲԹ, ուր ԲԹ-ն բնակչության թիվն է) ճապոնիայում, Միացյալ Թագավորությունում և ԱՄՆ-ում աճել է 3-8 անգամ, սակայն բարեկեցության միջին մակարդակը մնացել է անփոփոխ: Վերջին 45 տարում երկրագնդի բնակչությունը կրկնապատկվել է՝ 3,5 միլիարդից հասնելով 7 միլիարդի, իսկ երկրագնդի էկոնոմիկան աճել է 3,8 անգամ՝

11,2 տրիլիոնից 42,5 տրիլիոնի [1, 2], այսինքն՝ ՀՆԱ/ԲԹ-ն մոտ երկու անգամ աճել է: Նույն ժամանակամիջոցում կյանքի տևողությունն աճել է 56 տարուց մինչև 69,6 տարի՝ 5-ից ցածր տարիքի մահացության կտրուկ նվազման հետևանքով (1000 ծնվածներից դրանց թիվը 153-ից նվազել է մինչև 51-ի, ուղիղ 3 անգամ [3]): Այս դրական թվացող տվյալներն իրականում ձեռք են բերվել ազգային կարևոր արժեհամակարգերի և համընդհանուր ներդաշնակության առնվազն մասնակի կորստի, նաև մի շարք այլ կարևոր գործոնների անտեսմամբ, դրա համար իրականում ծանր բեռ են հանդիսացել բնական կապիտալի [4] և էկոհամակարգերի համար՝ երկրագնդի բնակչության շոշափելի մասին մատնելով սովի և աղքատության:

Բնեռացումը նրանց միջև, ովքեր հասարակական բուրգի վերևում են գտնվում և կարող են գերշահույթների կամ այլ տրանզակցիաների միջոցով խոշոր կապիտալ հավաքել, և նրանց միջև, որոնց համար նման հնարավորություններն իսպառ բացակայում են, ինչպես և սոցիալական վերելակներից օգտվելը, հետզհետե սաստկանում է: Օրինակները բազմաթիվ են. բերենք միայն *Oxfam*-ի տվյալները. երկրագնդի 85 ամենահարուստ մարդկանց կարողությունը հավասար է մոլորակի չունևոր կեսի, այսինքն՝ 3.6 միլիարդ մարդու կարողությանը: Եվ դրանում ոչ մեկը, բացի աշխարհում այդ ժամանակամիջոցում գործող կառավարություններից, մեղք չունի. նման երևույթները կանխելու համար՝ ցանկության դեպքում, անհրաժեշտ են համակարգված տևական ջանքեր, ինչն ի գորու է իրականացնել միայն հզոր պետական ապարատը, եթե, իհարկե, ավելի «կարևոր» խնդիրներ չունի իր առջև դրված: Ինչպես վերջերս ցույց տվեց տարբեր համալսարանների (Փենսիլվանիայի, Կոնստանցայի, Բարսելոնայի Անկախ համալսարան) տնտեսագետներից կազմված միջազգային խումբը, որ 1960-2005թթ. հետազոտել էր մեծ թվով ամերիկյան ընտանիքներ, այդ գրեթե կետարյա հատվածում ամրապնդվել է մի միտում, որը խիստ խոցելի է դարձնում հասարակությունը. ընտանիք

կազմելու հիմք աստիճանաբար ավելի հաճախ հանդիսանում են ոչ թե զգացմունքները, այլ կաստայական նկատառումները, որն էլ, հասկանալի է, էլ ավելի բևեռացման է բերում: Պարզ է, որ նման խնդրի լուծմանը եթե անգամ եկեղեցին լծվի, ապա հաջողության ակնկալիքով՝ միայն պետության հետ: (Հետազոտողների մի այլ խումբ, այս անգամ Միչիգանի համալսարանից, նույնպես հետաքրքիր դիտարկումներ է կատարել ընտանիքի վերաբերյալ՝ քննելով նույնպես մեծ թվով ամերիկյան ընտանիքների պատմությունը՝ սկսած 1600 թվականից. ընտանիքների մեծությունը նվազել է ավելի քան երկու անգամ, որն էլ այդքան անգամ հզորացրել է կենսապահովմանը հասցրած էկոլոգիական և ռեսուրսային հարվածը: Սա ևս կարելի էր կանխել՝ ազգային շահերին ուղղված արժեհամակարգ դնելով կրթության հիմքերում):

### ***3. Սպառումը և բարեկեցությունը***

Սպառումը դրականորեն է ներգործում մարդկային զարգացման և բարեկեցության վրա, եթե ընդլայնում է մարդկանց կարողությունները՝ առանց այլոց վնաս տալու, նպաստավոր է ապագա սերունդների համար, չի խեղում մոլորակի կարողությունները, նպաստում է անվտանգ, ստեղծագործ, բովանդակալից կյանքով ապրող հասարակությանը [5]: Ցավոք, այժմյան սպառողականությունը հեռու է նշված չափանիշներից. չնայած 1961 թվականի համեմատությամբ մեկ շնչի հաշվով աշխարհում 34%-ով ավելի մթերք է արտադրվում, մոտ մեկ միլիարդ մարդ այսօր թերսնված է և անոթի [6, 7], և չնայած նրան, որ համաշխարհային տնտեսությունն այդ ժամանակամիջոցում քառապատիկ աճել է, 2 միլիարդից ավելի մարդ օրական \$2-ից պակաս գումարով է ապրում: Չնայած աշխարհում մեկ շնչին միջինը բաժին է ընկնում 170 լիտր խմելու ջուր, որը միանգամայն բավարար քանակ է, 0,9 միլիարդ մարդու համար մաքուր ջուրն անհասանելի է, իսկ 2,6 միլիարդ մարդ ապրում է ոչ պատշաճ սանիտարական պայմաններ

րում [8]: Պարզ է, որ այս մարդիկ կարիք ունեն ավելին սպառելու, այն դեպքում, երբ մի այլ խմբի սպառում այնպիսին է, որ ընդհանուր սպառումը դարձնում է ավելի քան գերազանցված:

Գերսպառումն ունի 2 բացասական դրսևորում. բնական ռեսուրսների աղքատացում և էկոհամակարգերի ունակության սահմանափակում՝ գերսպառման հետևանքով առաջացած թափոններն ասիմիլացնելու համար: Եվ մեկ պատճառ. ժամանակակից էկոնոմիկան արհեստականորեն նստեցված է սպառողականության անընդհատ աճի ասեղի վրա: Դրա դադարեցման հետ այն խիստ կտուժի, բայց կտուժի կանաչ գույն չպարունակող էկոնոմիկան, փոխարենը մոլորակը քայլ առ քայլ կվերականգնվի, որի արդյունքում կաճի ոչ միայն ֆիզիկական, այլև մտավոր բարեկեցությունը: Սա կբերի մարդկային համակեցության ընդհանուր առողջական վիճակի կտրուկ բարելավմանը թե՛ քաղաքներում և թե՛ գյուղական վայրերում, ինչի օրինակներն արդեն ունենք կանաչ կառուցապատման ծրագրերի իրականացման արդյունքում [9]:

#### ***4. Մանրամթերքը և էներգատեսուրսները՝ խնայողաբար***

Ով անփութորեն վատնում է աշխատանքով ազնվացրած նյութը՝ ծարավ է մահով:

*Կոստան Չարյան*

Աշխարհում արտադրվող մթերքի 30-40%-ը դատապարտված է թափոն դառնալու. մոտ 1,5 միլիարդ տոննա մթերք է թափվում՝ ավելի քան 1 տրիլիոն դոլար արժողությամբ: Ավելի տխուր է իրավիճակն էներգետիկայում. Նյու Յորքի մեկ շաբաթվա էլեկտրաէներգիայի ծախսը համեմատելի է ողջ Աֆրիկյան մայրցամաքի տարեկան ծախսի հետ, և եթե զարգացած երկրները, հատկապես վերջին 1-2 տասնամյակում, լուրջ փորձեր են ձեռնարկում էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ուղղությամբ, ապա զարգա-

ցող երկրները կայուն կերպով շարունակում են տնտեսության նումինալ էներգատարողությունը գերազանցել 3-4 անգամ՝ նախատեսված և չնախատեսված կորուստների պատճառով:

Ինչ խոսք, այս կարևոր 2 ուղղություններով էլ քայլեր կատարվում են. տարբեր եղանակներով փորձ է արվում ռացիոնալացնել սննդի արտադրությունը, զսպել սպառողական տենդը, վերամշակել թափոնները: Էներգետիկայի առումով միանգամայն հուսադրող է թվում երկու պարադիգմալ մակարդակով հասունացած ավանդական մոտեցումների վերանայումը: Դրանցից մեկն այն է, որ որքան էլ ռեսուրսի սեփականատերը շահում է, ռեսուրս գնողը դրա, առնվազն, տասնապատիկն է շահում: ՌԴ Ազգային ակադեմիայի էներգետիկական հետազոտությունների ինստիտուտի հաշվարկներով՝ միջազգային գներով վաճառված 10 միլիոն տոննա նավթը ԱՊՀ երկրներում մեկ տարում ապահովում է \$10 մլրդ-ի եկամուտ և 2 միլիոն աշխատատեղ: Այդ նույն թվերը Ճապոնիայի համար այսպիսի տեսք կունենան՝ 38,57 միլիարդ և 2,83 միլիոն, իսկ Չինաստանի համար՝ 19,24 միլիարդ և 17,65 միլիոն համապատասխանաբար (տարբերությունները, հասկանալի է, պայմանավորված են առաջին հերթին կիրառվող տեխնոլոգիաներով): Բնագավառի առաջատար մասնագետների կարծիքով՝ մյուսն այն է, որ ոչ մի էներգառեսուրս չի կարող մրցակցել էներգախնայողության հետ, ուստի այն պետք է դիտարկվի որպես ամենակարևորը դրանցից (մոտավոր գնահատմամբ՝ դա կազմում է համաշխարհային էներգածախսման 1/3-ից ավելին):

Հաջորդ մոտեցումը, որ հետզհետե հասունանում է «տնտեսական աճի կրոնի» հակառակորդների ճամբարում՝ սկսած 1972թ. հրապարակված Հոմի ակումբի զեկույցից և *Le Nouvel Observateur* ազդեցիկ հրատարակության և քաղաքական էկոլոգիայի հիմնադիր Անդրե Գորցի առաջին ելույթներից, բավական ունիվերսալ է և կարող է ընդգրկել ինչպես սննդամթերքն ու էներգետիկան, այնպես էլ ցանկա-



ցած ոլորտ: Ըստ այս մոտեցման, որը կողմնակիցները պայմանակա- նորեն «դոտացիոն» են անվանում, պետք է ազատել մեր գիտակցու- թյունը «տնտեսական աճ-գրադվաճություն-բարեկեցություն» կաշ- կանդող շղթայից և առաջին հերթին սահմանել նվազագույն պարտա- դիր բարիքների մակարդակ (դ), որով բոլորն ապահովվում են՝ ջուր, սնունդ, հագուստ, տանիք, և այդ բոլորը՝ գրեթե անվճար: Որից հետո, ավելի շատ պահանջներ ունենալու պարագայում (առաջարկվում է, որ դա բոլոր դեպքերում չգերազանցի 4դ մակարդակը), վճարումներ են կատարվում աճող պրոգրեսիայով, որտեղ եթե որևէ կողմ տուժելու է, ապա դա չպետք է լինի բնությունը:

Այսպիսով, տեղի կունենա անցում դեպի այնպիսի հասարակու- թյուն, որտեղ պարտադիր համարվող աշխատանքը կփոխարինվի մարդու ընտրությամբ իրականացվող օգտակար գործունեությամբ և հարկ չի լինի ողջ կյանքի ընթացքում ավելորդ իրեր արտադրել ու վաճառել դրանք մարդկանց, ովքեր դրա կարիքը չունեն:

### ***5. Ներկա սցենարից խուսափելու հնարավորությունները***

Ներկա վիճակն ավելի առարկայորեն պատկերացնելու համար բե- րենք ևս մի քանի ցուցանիշ: Աշխարհում այսօր 1,13 միլիարդ ավտո- մեքենա կա՝ ամեն 100 մարդուն՝ միջինը 16,1 (ԱՄՆ-ում՝ 81,2, Ասիայի զարգացած երկրներում՝ 38, BRIC երկրներում՝ 8), որոնց ընդհանուր վազանքը կազմում է տարեկան 15,5 տրիլիոն կիլոմետր, որի 2/3-ը բաժին է ընկնում զարգացած երկրներին [10]: Չարաբաստիկ ՀՆԱ մեկ շնչին հասնող բաժնի ավելացումը \$1000-ով բերում է ամեն 100 մարդու հաշվով մեքենաների թվի 1,3-ով ավելացման, որն էլ ավելաց- նում է ածխաթթու գազի արտանետումները մեկ շնչի հաշվով տարե- կան 0,4 տոննայով: Ներքին այրման շարժիչների վառելանյութի ծախսն աշխարհում 2012-ին կազմել է օրական 9 միլիարդ բարել (որի 1%-ը ծախսվում է ԱՄՆ-ում): Արդարության դեմ չմեղանշելու համար

ասենք, որ սա ռեսուրսների միակ բնագավառն է, ուր դիվերսիֆիկացման համար զգալի ներդրումներ են արվում, որի շոշափելի արդյունքը սպասվում է, որ կերևա 2020-ին, արտահայտված նրանով, որ ԱՄՆ-ը և Եվրոպան այդուհետ օրական մեկական միլիարդ դոլար չեն ծախսի հեղուկ վառելանյութ ներկրելու համար:

Պակաս աղետալի չէ վիճակը ջրի սպառման առումով. հարուստ երկրները շարունակում են այստեղ էլ մնալ որպես անխնա և անպատասխանատու սպառող: Այսպես, երկրների առաջին խումբը (տե՛ս *Աղյուսակը*) աշխարհում միջինը 170 լիտրի դիմաց ծախսում է միջինը 457 լիտր (աշխարհի 13 երկիր գերազանցում է 400 լիտրի սահմանը), այն դեպքում, երբ աղքատ և ամենաաղքատ երկրների խումբը ծախսում է համապատասխանաբար 47 և 18.3 լիտր:

Քաջ գիտակցելով, որ գործ ունենք հսկայական իներցիա ունեցող երևույթների հետ, այնուամենայնիվ, նշենք մի քանի սկզբունքային ուղղություն, որոնք բեկում կմտցնեն կարծրացած մտածելակերպի և գործելակերպի մեջ.

ա. իրավիճակը կտրուկ փոփոխող ինովացիոն տեխնոլոգիաների ներդրում և տարածում (մեր երկրում դա կարող է լինել «բնական երկրագործությունը», որն այսօր աշխարհում կիրառվում է ավելի քան 150 միլիոն հեկտարի վրա [11], և որը հնարավորություն է տալիս պակաս էներգետիկ և ֆինանսական ներդրումներով հասնել առավելագույն արդյունքի), որոնք սովորաբար դրական ազդեցություն են ունենում նաև էկոնոմիկայի հարակից բնագավառների զարգացման վրա,

բ. դարձնել մեզ շրջապատող ամեն ինչը, և առաջին հերթին միջավայրը, ավելի արժեքավոր և գնահատելի, ավելի դիմացկուն և երկարակյաց՝ խնայողության գաղափարը դարձնելով գերակայող, քանի որ դրանց հաճախակի թարմացումն ի վերջո կատարվում է մարդկանց բարեկեցության հաշվին,

գ. վարել միջավայրամետ և ցածրաձխաձնային քաղաքականու-

թյուն, դարձնել դրանք մշակութայինին և հոգևորին հավասար արժեքներ հասարակության և տնտեսության համար՝ միաժամանակ նպաստելով անձի իդենտիկության պահպանմանը,

դ. մի կողմից՝ սպառողականության և մյուս կողմից՝ քարեկեցության ու բավարարվածության միջև կապն առողջացնել, հրաժարվել ՀՆԱ աճը որպես քաղաքական արդյունք ներկայացնելու ավանդույթից, ավելացնել ներդրումները կանաչ էկոնոմիկայում:

Մրանցից ոչ մեկը հեշտ չի լինի իրականացնել [12], սակայն քիչ չեն նաև դեպքերը [6, 13-21], երբ այդ ուղղությամբ հաջողվել է գրանցել շոշափելի արդյունքներ. դրանք արժանի են ընդօրինակման:

### **6. Կյանքի բավարարվածությունը և մարդկային զարգացման ինդեքսը**

Ով այս վերջավոր աշխարհում հավատում է տնտեսական աճի անվերջությանը, իսկ էլ կամ տնտեսագետ:

*Քենեթ Բոուլդինգ*


Անցյալ դարի 40-ական թվականներից սկսեցին նկատել, որ ՀՆԱ/ԲԹ արժեքը, որն ինչ-որ չափով կարող է պատկերացում տալ երկրի զարգացած, թեր- կամ գերզարգացած տնտեսություն ունենալու մասին, այսօր աստիճանաբար ավելի ոչ պիտանի է դառնում քարեկեցությունը և արժանապատիվ ապրուստը չափելու համար: Սկզբում առաջարկվեց կյանքի բավարարվածության կամ կենսաբավարարվածության (ԿԲ) չափանիշը, որը մինչ այժմ էլ հաջողությամբ կիրառվում է [22], հետո իրական առաջընթացի չափորոշիչը [23], էկոլոգիական հետազոտությունը [24-26], մոլորակային երջանկության ցուցիչը [27], մոլորակային եզրերը [28] և, վերջապես, մարդկային զարգացման ինդեքսը (ՄԶԻ) [29], որն էլ, ի տարբերություն մյուս թվարկածների, ԿԲ-ի հետ սկսեց լայնակի կիրառվել՝ բերելով կարևորագույն տրամաբանական եզրահանգումների:

Ինչպես ՀՆԱ տարեկան աճը, կապված չլինելով որևէ սոցիալական կամ բարոյական չափանիշի հետ, ոչինչ չի ասում, բացի նրանից, որ այս կամ այն երկրի տնտեսությունը մեռած չէ կամ այսօր ավելի լավ վիճակում է, քան, ասենք, 2 տարի առաջ, կամ ընդհակառակը, այդպես էլ ՀՆԱ/ԲԹ մեծությունն ինքնըստինքյան շատ բան ասել չի կարող՝ ձեռք բերելով զուտ հարաբերական արժեք համեմատական դիսկուրսներում: Բայց ահա կապելով դրանք ճիշտ ընտրված չափորոշիչների հետ, ինչպիսին ԿԲ-ն և ՄՁԻ-ն են, կարելի է ձեռք բերել կարևոր տեղեկատվական նշանակություն ունեցող (թե՛ մեթոդաբանական, թե՛ գործնական առումով) չափանիշների շարք:


Այդ մասին են վկայում հանրահայտ անգլիական համակարգային վերլուծաբան Ջուլիա Փրետիի ամենավերջին հետազոտությունները [30]: Ձեռքի տակ ունենալով 189 երկրի տվյալներ և համադրելով ՀՆԱ/ԲԹ և ԿԲ ու ՄՁԻ արժեքները՝ նա ստացել է չափազանց հետաքրքիր տվյալներ (*Նկ. 1*): Պարզվում է, որ ՀՆԱ աճն իմաստ ունի միայն մինչև ՀՆԱ/ԲԹ արժեքի \$10 000-ին մոտ սահմանները: Բազմաթիվ այլ աղբյուրներից քաղած տվյալների հետ համեմատումը բերում է մի հետաքրքիր եզրահանգման. առողջ հոգեկան վիճակում գտնվող հասարակության համար այդ արժեքը կարող է կրել \$10.000-30.000 տիրույթի բնույթ: Ներոտիկ և պսիխոզենիկ հաճախ հանդիպող շեղումների դեպքում «երջանկության կետը»՝ գուցե և ինքնապաշտպանական մեխանիզմների միանալու հետևանքով, մնում է \$10.000-ի մոտ սահմաններում (որոշ երկրներում դա կոչվում է «միջինացված եկամուտների թակարդ»):

Թե ինչի վրա է ծախսվում ՀՆԱ/ԲԹ 2-5 անգամ ավելացումը, պարզ երևում է *Նկար 2*-ում բերված գույգ կորերից՝ ոչնչի. աննշան, 1-2 տարով ավելանում է կյանքի տևողությունը և որոշ չափով ՄՁԻ-ն՝ «միանգամայն բավարարից» դառնալով «ավելի, քան միանգամայն բավարար», բայց ածխածնի երկօքսիդի արտանետումների ավելի քան տասնապատիկ ավելացման հաշվին, որը Երկիր մոլորակի համար

միարժեքորեն ճակատագրական է լինելու: Եթե անգամ այն կարողանար դիմակայել այդպիսի ճնշմանը, դժվար թե իմաստ կունենար մի քանի տասնյակ մարկանց ավելի հարստացման համար նման բարձր գին վճարել: Ասվածն ամփոփվում է *Նկար 3*-ում բերված կորով, որից երևում է, թե ինչպես ռեկորդային գնողունակության հասած մի քանի երկրներ, որն ինչ-որ թվով մարդկանց բավարարություն է բերել այդ երկրներում, ինչ գին են վճարել դրա համար՝ արտանետված տոննաների ձևով, այսինքն՝ եկող սերունդների հաշվին: Այսպիսով, ունենք




Նկ. 1 Կյանքի բավարարվածության (a) և մարդկային զարգացման ինդեքսի (b) կախվածությունը ՀՆԱ-ից



Նկ.2 ՀՆԱ-ի և աձխաձևի երկօքսիդի արտանետումների միջև կապը՝ երկրի մակարդակում (n = 185)

բովանդակություն չպարունակող աճ, բայց ոչ զարգացում: Սակայն զարգացման առաջժամ պարտադիր ուղեկցող՝ քանի չենք վերանայել մեր մոտեցումները, որն անողորքաբար, աճող տեմպերով, միանգամայն անիմաստ կերպով աղտոտում է երկրագնդի մթնոլորտը: Այս ցուցանիշին նորից բովանդակություն հաղորդելու համար Ջ.Փրետին առաջարկում է



Նկ.3 a Ածխածնային արտանետումների և մարդու կյանքի ակնկալվող տևողության միջև կապը՝ երկրի մակարդակում (n = 184):  
 b Ածխածնի երկօքսիդի արտանետումների և Մարդկային զարգացման ինդեքսի միջև կապը (n = 184):

կենսաբավարարվածության չափանիշը հարաբերակցել ՀՆԱ/ԲԹ-ին (ԿԲ/ՀՆԱ/ԲԹ), որին հետևելով և օգտվելով մի շարք աղբյուրներից [31-35]՝ կազմել մի աղյուսակ՝ 7 խմբի բաժանված 30 երկրների համար, որտեղ զարգացման իրական և թվայն գործոնները, դրվելով համեմատության մեջ, առանձին իմաստ են ձեռք բերում՝ բացահայտելով արդարացված և չարդարացված առաջընթացը.

Աղյուսակ

7 խումբ երկրների համեմատական տվյալները

	ՕՉՆ արտա- նետարձեղ տ/ճեչ/տա-րի	ՋԴՆ օգտա- գրծում լճեչ/տա-րի	ԿԳՃ/ճեչ/տա-րի մեծ	100 ճեչին ընկերոջ ավ- տանը թիվ	մինչև 5 տար- մանոցսն. թիվը/1000 նիւլ.	ԿԳՃ/ ՀՆԱ/ ԲԹ
<i>Հյուսիսային Ամերիկա, Եվրոպա, Ավստրալիա</i>	14,16	526.6	99.4	66,4	5.6	0.19
ԱՄՆ,	17.3	528	123	81	8	0.16
Միացյալ Թագ.	8.5	113	85	53	5	0.20
Գերմանիա	9.6	157	88	63	4	0.18
Ավստրալիա	19.0	1122	123	73	5	0.19
Վանադա	16,4	713	78	62	6	0.20
<i>Ասիայի առաջատար երկրներ</i>	9.0	266	51	38	4	0.18
Ճապոնիա	9.5	375	46	59	3	
Վորեն	10.6	374	56	38	5	
Մինգապուր	7.0	48	-	16	3	
<i>Լատ. հանրեք ուներոջ երկրն.</i>	35.1	295	65	39	8	0.18
Սաուդյան Արաբ.	17.2	222	54	34	9	0.27
Վատար	53.5	315	55	53	8	0.07
Միացյալ Ար. Էմ.	34.6	348	85	31	7	0.21
<i>BRIC</i>	5.2	195	50	16	26	0.79
Բրազիլիա	2.1	228	81	26	16	0.66
Ռ՛	12.1	281	61	27	12	0.29
Չինաստան	1.5	126	3	2	61	1.52
Չինաստան	5.2	143	54	8	15	0.69
<i>CIVETS</i>	3.4	194	32	8	26	0.92
Վոլումբիա	1.5	319	44	7	18	0.71
Ինդոնեզիա	1.8	78	11	8	32	1.31
Վիետնամ	1.5	171	41	1	22	1.79
Էգիպտոս	2.6	169	22	4	21	0.83
Թուրքիա	3.9	215	24	14	15	0.40
Հարավային Աֆր.	8.8	210	49	16	47	0.46
<i>Կանաչ քաղ. վարող աղք. երկր.</i>	0.9	47	20.5	6.7	53.7	2.52
Վուստա Ռիկա	1.8	-	49	17	10	0.66
Բուտան	1.1	83	3	5	54	3.72
Գանա	0.4	26	14	3	78	2.96
Քեիիա	0.3	32	16	2	73	2.73
<i>Ամենաաղքատ երկրներ</i>	0.1	18.3	6.3	0.7	111	7.9
Լիբերիա	0.1	20	4	0.3	78	10.6
Մոզամբիկ	0.1	8	6	1.2	103	5.3
Բուրունդի	0.1	16	4	0.5	139	9.7
Նիգեր	0.1	29	11	0.8	125	5.9



## 7. Բարեկեցության կայացման խոչընդոտների վերացումը

Ավելի մեծ իմաստ ունի հարմարվել սահմաններ ունեցող մեր մոլորակին, քան փորձել այն հարմարեցնել մեր անսահման ցանկություններին:

*Դեյվիդ Օս*

Մպառոդության անիմաստ տենդ և ՀՆԱ աննպատակ աճ արտահայտող վերը բերված կորերի հազեցման հորիզոնական մասը պետք է որ սթափեցնի և լուրջ հետևություններ անել տա: Անհրաժեշտ է տևական գիտակցումն այն բանի, որ մարդը կարևոր դերակատարություն ունի մոլորակի ճակատագրում, այլ ոչ թե ընդամենը արձագանքում է տարբեր ճգնաժամերի (որոնք առաջացնում է իր իսկ կառուցած արատավոր էկոնոմիկան) և կարճաժամկետ ծրագրեր կազմում՝ դրանցից դուրս գալու համար: Մինչ այժմ քաղաք դասերը պետք է որ թույլ չտան այսուհետ դրանցում հայտնվել: Եվ չի կարելի ձեռքերը ծալած նստել, ինչպես դա անում են շատ երկրների այսպես կոչված կառավարությունները. ՀՆԱ-ի և սպառման աճը չեն բերում ինքնին ԿԲ աճին, այլ առաջացնում են շրջակա միջավայրի և սոցիալական խեղումներ այն պատճառով, որ բարոյական կարգի գործոնները շուկայի կողմից անտեսվում են, ինչի միանձնյա մեղավորը սովորաբար երկրի ոչ պատշաճ կառավարումն է: Այսպիսով, երկրի կառավարությունն է պատասխանատու նրանում տեղի ունեցող բնական և սոցիալական կապիտալների հյուծման, ուրեմն և բարեկեցության չկայացման համար [36]: Շատ զարգացած երկրներում, այդ թվում և Ճապոնիայում, Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում, այդպիսի կորուստների վավերագրումն ու անպատասխան չթողնելը օրենսդրական ապահովվածություն ունեն [37-41]:

Ուրեմն, ժողովուրդների բարեկեցությունն ապահովելու համար անհրաժեշտ են միջոցառումներ՝ ուղղված *բնական և սոցիալական*

կապիտալի կուտակմանը և անձի բարեկեցության ապահովմանը: Ինչն այժմ չի արվում: Դրա փոխարեն տարեկան \$1 տրլն արժողությամբ 1,3 միլիարդ տոննա պարենի կորուստ կարող ենք ապահովել աշխարհով մեկ՝ արտադրական (բերքահավաք, տեղափոխում, պահեստավորում) և սննդի թափոնների ձևով, որի արտադրական տարածքները հավասար են աշխարհի՝ մեծությամբ երկրորդ երկրի ընդհանուր տարածքներին, որով կարելի էր կերակրել 2 միլիարդ մարդ:

### **8. ՀՆԱ դարաշրջանի սկիզբն ու ավարտը, կամ՝ հետզրույթյան փոխարեն**

Շարադրվածի գաղափարախոսությունը ձևավորվել է մեզանում վերջին տասնամյակի ընթացքում [4, 42-44], աշխատությունը գտել է իր ձևը վերջին մեկ տարվա ընթացքում և շարադրման ավարտին՝ այս տարվա հունվար ամսին, հայտնի դարձավ, որ աշխարհի տարբեր երկրներ և տարբեր մասնագիտություններ (սոցիոլոգներ, տնտեսագետներ, էկոլոգներ) ներկայացնող մի խումբ գիտնականներ հանրահայտ *Nature* ամսագրին ուղարկված հոդվածի միջոցով [45] դիմել են մոլորակի մակարդակով որոշումներ կայացնողներին՝ առաջարկելով հրաժարվել ՀՆԱ-ից՝ որպես հիմնական տնտեսագիտական չափանիշից, հոգուտ այնպիսինի կամ այնպիսիների, որ հնարավոր լինի արտահայտել տնտեսագիտությունում մինչև այսօր դրամական միավորներով դժվարությամբ ներկայացվող որակները:

Վիքիպեդիայից իմանում ենք, որ դեռևս 1696 թվականին Գրեգորի Քինգը փորձել է իր երկրի՝ Մեծ Բրիտանիայի բարգավաճման մակարդակը որոշել ազգային եկամտի նախահաշիվներ կազմելով: Հավանաբար, նա և իր հետնորդներն այդ գործում այդպես էլ հաջողության չհասան, քանի որ 1929-ի ճգնաժամին, բոլորի կողմից այդպիսի ընդունված չափորոշիչ չլինելու հետևանքով, տնտեսագետները բաժանվել էին մոտավորապես հավասար խմբերի, որից մեկը պնդում

էր, որ իրավիճակն ուր որ է բարելավվելու է, իսկ մյուսն, ընդհակառակը, որ օրեցօր և անընդհատ պետք է սպասել իրավիճակի վատացմանը: Այդ ժամանակ էլ ծագումով ռուսական հրեա, ամերիկաբնակ, էկոնոմետրիկայի հեղինակավոր մասնագետ Սայմոն Կուզնեցին առաջարկվեց մշակել այդպիսի չափանիշ, որն էլ նա իրականացրեց՝ որսալով ձեռքի տակ եղած հսկայաքանակ տվյալներից այն, ինչ հիմք հանդիսացավ արտադրության և եկամուտների պարզ և հետևողական պատկեր կառուցելու համար՝ ի վերջո արժանանալով Նոբելյան մրցանակի նաև ՀՆԱ գաղափարի համար, որն էլ մեկ դարից փոքր-ինչ պակաս ծառայում է մարդկությանը:

Սակայն ներկա շարադրանքը՝ իր բազմաթիվ հղումներով, ինչպես և նշված ամսագրում բոլորովին վերջերս հրատարակված հոդված-նամակը գալիս են ասելու, որ ՀՆԱ-ն՝ որպես ունիվերսալ չափորոշիչ, իր դարն արդեն ապրել է, և եթե չկա հասարակությունը մոլորեցնելու գիտակցված միտում, դրանից պետք է շատ դեպքերում հրաժարվել: Վերջին հրապարակման հեղինակները, բերելով դրա ևս այլ հիմնավորումներ, առաջարկում են ՀՆԱ-ի փոխարեն կիրառել այլընտրանքային չափորոշիչ՝ «իրական առաջընթացի ինդեքսը» (ԻԱԻ), որը հաշվի է առնում 20-ից ավելի բազմազան գործոններ, այդ թվում՝ շրջակա միջավայրի աղտոտումով հասցված վնասը, հանցագործություններից, ամուսնալուծություններից և այլ նեգատիվ երևույթներից առաջացած վնասները, մասնակի սպառումը և այլն: Հասկանալի է, որ գործիքն առայժմ բարդ է և անկատար, ինչը, սակայն, նշանակում է, որ այն ոչ թե պետք է մերժվի, այլ կատարելագործվի: Դրա անհրաժեշտությունն ու անհապաղությունը պայմանավորված են վերը թվարկված փաստերով, ինչպես նաև հիշատակված հրապարակման մեջ տեղ գտած դիտարկումներով: Այսպես, ըստ հեղինակային խմբի կատարված հաշվարկների, 1950-2010թթ. ժամանակահատվածում միջինը աշխարհում ՀՆԱ/ԲԹ արժեքն անընդհատ

աճել է՝ հասնելով ի վերջո մինչև \$10 000-ի սահմանները, այն դեպքում, երբ իրական առաջընթացի ինդեքսն աճել է մինչև 1975 թվականը՝ հասնելով \$4000-ի սահմաններին, այնուհետև ոչ միայն չի աճել, այլև, ճիշտ է դանդաղ, բայց նվազել է:

Սա պետք է անել հնարավորինս սեղմ ժամկետներում, քանի որ մեզ ևս այլ մարտահրավերներ են սպասում. աշխարհն ընթանում է գլոբալ պոստմոդեռնիզացման ուղղությամբ, որին հատուկ են արմատական փոփոխություններ՝ հիմնված, բարեբախտաբար, ոչ այնքան դոգմաների, որքան խորը թաց ռեալական փոփոխությունների վրա:

*Մայիս, 2014թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. World Bank. World Bank Development Indicators. 2012. At [www.Worldbank.org](http://www.Worldbank.org)
2. World Bank. Inclusive green growth. The Pathway to Sustainable Development, Washington, 2012.
3. Levels and trends in child mortality. UNICEF, New York, 2012.
4. *Haykazyan V., Pretty J.*, Sustainability in Armenia: New Challenges for the Agricultural Sector. Centre for Env. and Soc. Occasional Paper 2006-1, Univ. of Essex, Colchester, UK.
5. People and the planet. Royal Society, London, 2012.
6. *Pretty J.*, Interdisciplinary progress in approaches to address social-ecological and ecocultural systems. *Environ.Cons.* 38(2), 2011.
7. *Conway G.*, One billion hungry. Cornell University Press, Ithaca, 2012.
8. Towards a green economy: pathways to sustainable development and eradication of poverty. UNEP, Nairobi, 2011.
9. *Barton J., Pretty J.*, What is the best dose of nature and green exercise for mental health? A meta-study analysis. *Environ. Sci.Tech.* 44, 2010.
10. CEP. US population. Energy and climate change. Center for Environment and Population, Washington, 2008.
11. *Kassam A., Friedrich T., Shaxson F., Pretty J.*, The spread of conservation agriculture: justification, spread and uptake. *Int.J.Agric.Sust.* 7(4), 2009.
12. *Jackson T.*, Prosperity without growth. Earthscan, London, 2009.
13. *Pilgrim S., Pretty J.* (eds), Nature and culture. Earthscan, London, 2010.
14. *Pretty J.*, The Earth Only Endures. On Reconnecting with Nature and Our Place In It. Earthscan, London, 2007.

15. *Elgin D.*, Living more simply. In: Jackson T. (ed) Earthscan reader in sustainable consumption. Earthscan, London, 1981.
16. *Jones T.*, Utopian dreams. Faber and Faber, London, 2007.
17. *Quilley S., Barry J.*, Transition towns: survival, resilience and the elusive paradigm shift in sustainable living. *Eco-Politics Online* 1(2), 2008.
18. *Anderson E.*, Ecologies of the heart. Oxford University Press, New York, 1996.
19. *Colding J., Folke C.*, Social taboos: “invisible” systems of local resource management and biological conservation. *Ecol Appl* 11, 2001.
20. *Berkes F.*, Sacred ecology, 2<sup>nd</sup> edn. Routledge, New York, 2008.
21. *Verschuuren B.*, Wild R., McNeely J.A., Oviedo G. Sacred natural sites. Earthscan, London, 2010.
22. *Veenhoven R.*, Trends in Nations, World Database of Happiness. Erasmus University Rotterdam, 2012. [http:// worlddatabaseofhappiness.eur.nl](http://worlddatabaseofhappiness.eur.nl)
23. *Daly H.E., Cobb C.*, For the common good. Beacon Press, Boston, 1989.
24. *Moffatt I.*, Ecological footprints and sustainable development. *Ecol.Econ.* 32, 2000.
25. Living planet report. WWF and Global Footprint Network, London and Oakland, 2010.
26. China ecological footprint report 2012. WWF and Global Footprint Network, London and Oakland, 2012.
27. NEF (New Economics Foundation). Happy planet index. 2013. At <http://www.happyplanetindex.org>
28. Rockstrom J et al. Planetary boundaries: exploring the safe operating space for humanity. *Ecol.Soc.* 14 (2), 2009.
29. Human development report 2011 – Sustainability and equity. UNDP, New York, 2011.
30. *Pretty J.*, The Consumption of a Finite Planet: Well-Being, Convergence, Divergence and the Nascent Green Economy. *Environ. Resource Econ.* DOI 10.1007/s10640-013-9680-9, 19 May 2013, Online Publication.
31. United Nation Conference on Sustainable Development (UNCSD), 2012. At [www.uncsd2012.org/rio20/](http://www.uncsd2012.org/rio20/)
32. Levels and trends in child mortality. UNICEF, New York, 2012.
33. World Development Indicators. WB, 2012. At [www.worldbank.org](http://www.worldbank.org)
34. Inclusive green growth. The Pathway to Sustainable Development. WB, Washington, 2012.
35. FAOSTAT. FAO, Rome, 2012.
36. *Czikzentmihalyi M.*, The cost and benefits of consuming. *J Consumer Res* 27, 2000.
37. *Putnam R.*, Bowling alone: America’s declining social capital. *J Democr* 6(1), 1995.

38. *Pretty J.*, Social capital and the collective management of resources. *Science* 302, 2003.
39. *Pretty J.*, This luminous coast. Full Circle Editions, Saxmundham 2011.
40. MEA. Ecosystems and human well-being. Island Press, Washington, 2005.
41. NEA (National Ecosystem Assessment). The UK National Ecosystem Assessment: technical report. UNEP-WCMC, Cambridge, 2011.
42. *Հայկազյան Վ.*, Հայաստանի գյուղատնտեսության խնդիրները և զարգացման հեռանկարները, «Նորավանք» ԳԿՀ «Հայաստան» տեղեկագիր, #2, Երևան, 2004:
43. *Հայկազյան Վ.*, Հայաստանի պարենային անվտանգության հիմնախնդիրները, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ դար», #4, Երևան, 2007:
44. *Հայկազյան Վ.*, Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման հայեցակարգի ուրվագիծ, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ դար», #4, Երևան, 2009:
45. *Costanza R., Kubiszewski I., Giovannini E., Lovins H., McGlade J., Pickett K.E., Ragnarsdottir K.V., Roberts D., De Vogli R., Wilkinson R.*, Development: Time to leave GDP behind. *Nature* 505, 16 Jan.2014 (doi:10.1038/505283a).

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԵՎ  
ԱԶԳԵՐԻ ԵՐԶԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ.  
ԹՎԱՅՅԱԼ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

***Վարդան Հայկազյան***

Ամփոփագիր

Հոդվածում ի մի են բերված ժամանակակից տնտեսական և հասարակական կյանքին հատուկ որոշ առանձնահատկություններ. առանձին շեշտադրվում են գերշահույթների, սպառողականության ֆետիշացման և հատկապես ՀՆԱ-ի՝ որպես տնտեսության և հասարակության վիճակը գնահատող միակ գործիքի, օգտագործման աննպատակահարմարությունն ու զուտ քաղաքական նպատակներով՝ միտումնավոր մոլորեցման համար օգտագործելու հանգամանքները: Դրա հետ մեկտեղ, այլ չափորոշիչների օգտագործումը ոչ միայն նպաստում է ռեալ իրավիճակների կոռեկտ գնահատմանը, այլև հնարավորություն է տալիս տեսնելու բնության և բնապահպանության կարևոր դերն արժանապատիվ կենսակերպ կառուցելու գործում: Աշխատությունում շեշտադրվում է խնայողությունը որպես ապագայի իմպերատիվ տրենդ ճանաչելու անհրաժեշտությունը:

## РАЗВИТИЕ ГОСУДАРСТВ И СЧАСТЬЕ НАЦИЙ: МНИМЫЕ И РЕАЛЬНЫЕ ПАРАМЕТРЫ

*Вартан Айказян*

Резюме

В статье обобщены некоторые особенности, свойственные современной экономической и общественной жизни. Отдельное внимание обращается на сверхприбыли, фетишизацию потребительства и особенно неэффективность использования ВВП в качестве единственного инструмента оценки состояния экономики и общества, что в ряде случаев делается исключительно из политических соображений, чтобы сознательно вводить в заблуждение. Наряду с этим учет других факторов не только способствует корректной оценки реальных ситуаций, но и позволяет увидеть важную роль природы и экологии в выстраивании достойного образа жизни. В статье подчеркивается необходимость признания бережливости императивным трендом будущего.

## DEVELOPMENT OF STATES AND HAPPINESS OF NATIONS: IMAGINARY AND REAL PARAMETERS

*Vartan Haykazyan*

Resume

Some peculiarities characteristic to the modern economic and public life are summarized in the article. Special attention is drawn to excessive profits, fetishizing the consumption and particularly, the ineffectiveness of using GDP as a single tool to measure the state of economy and society, which in many cases is done for political reasons, in order to deliberately mislead people. At the same time, considering other factors not only helps assess the actual situations more correctly, but also unveils the important role of nature and ecology in building a decent way of life. The article emphasizes the need to recognize prudent thriftiness as an imperative trend of the future.